

ՀՄԱՐԱՊԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՐԴՈՒՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ «ՀԱՄԱՌՈՑ ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

17—18-րդ դարերի հայ մշակույթի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի «տիեզերայուն փիլիսոփա», տրամաբան, քերական, գեղանկարիչ ու «թագաւորաց աստուածաբան» Հովհաննես (Մրբուզ) Զուղայեցին: Նա թողել է գրավոր բազմաքննություն ու հարուստ ժողովրդային, որի մի մասը, ցավոք, մեզ չի հասել, իսկ այն, ինչ պահպանվել է, առ այսօր ինչպես հարկն է չի ուսումնասիրվել:

Զուղայեցու մատենագրական ժառանգության մեջ առանձնահատուկ կարևորություն ունի «Համառոտ տրամաբանութիւն» աշխատությունը, որը, չնայած փոքր ծավալին, հայ տրամաբանական մտքի անուրանալի նվաճումներից է: Բավական է ասել, որ զարգացնելով Հայաստանում տրամաբանական գիտության ավելի քան հազարամյա ավանդույթները, Զուղայեցին մեզանում ըստ էության առաջինն է լայնորեն օգտագործում այդ մարզում պարսկա-արաբական նվաճումները: Ավելին, մի կողմից հավատարիմ մնալով տրամաբանական գիտության միջնադարյան սկզբունքներին, մյուս կողմից դրսևորում է նոր շրջանի տրամաբանության ոգուն համահունչ ձգտումներ, փորձում է մտրուկի լուծել ավանդական տրամաբանության շատ հարցեր: Օրինակ, հակադրվելով տիրապետող այն պատկերացմանը, որ դեդուկտիվ մտահանգման առաջին ձևի եղանակներում առաջին տեղում պետք է դնել մեծ նախադրյալը, Զուղայեցին, ընդհակառակը, դնում է փոքր նախադրյալը: Ընդ որում նա դա անում է գիտակցված ձևով և ընթերցողին թյուրիմացությունից զերծ պահելու համար իր այդ քայլին տալիս է փիլիսոփայական հետևյալ հիմնավորումը. «Բայց զգոյշ լեր, զի մի սխալեցնիս, զի ո՞մանք զմեծ նախադրութիւնն եղին սկիզբն նախադասութեանց, այլ ես՝ զփոքրն, զի սանդղութեան ներքնայն ելանեն ի վեր, եւ ոչ են ներսակը, այլ զնոյն ցուցանեն, թէպէտ յուսկ և յառաջ»¹ (ընդգծումն իմն է— Հ. Մ.): Նման մտեցման շնորհիվ դեդուկտիվ մտահանգման առաջին երեք ձևերի եղանակների Զուղայեցու տարբերակները ձևով բավականին տարբերվում են ավանդական տրամաբանության մեջ բնդունվածներից²:

Զուղայեցու խնդրո առարկա աշխատությունն այսօր արժեվորվում է նաև իր շարահրման ձևով: Դարգապես զարմանալ կարելի է, թե հայ տրամաբանն ինչպես է կարողացել անշափ փոքր ծավալի մեջ ընդգրկել տրամաբանական գիտության քոլոր հիմնահարցերը և այն էլ պարզ ու մատչելի ձևով, բայց գիտական բարձր մակարդակով: Կարծում եմ: այդ տեսակետից ևս Զուղայեցուց շատ քան ունեն սովորելու դարոցական ու թուրքական դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մերօրյա հեղինակները:

Թեև Հովհաննես Զուղայեցու այս աշխատությունը մեզ է հասել թե՛ ձեռագիր³ և թե՛ տպագիր⁴ վիճակում, բայց և այնպես դրա վերահրատարակության անհրաժեշտությունն Կգացվում է մի շարք առումներով.

¹ Հովհաննես Զուղայեցի, Համառոտ տրամաբանութիւն, Երկա հրատարակություն, էջ 116:

² Հովհաննես Զուղայեցու տրամաբանական հայացքների մասին ժամանակակից տե՛ս Լ. Կ. Միրզոյան, Логико-методологические взгляды Оганяна Зугугеци.— ИДВШ. «Философские науки», 1981, № 1, երկրորդ XVII դարի հայ փիլիսոփայական մտքի բնական վերլուծություն, Երևան, 1983, էջ 353—366:

³ Ցե՛ս Յովհաննես Զուղայեցի, Համառոտ տրամաբանութիւն, Մաշտոցի անվ. ճառե-նադարան, ձեռ. № 3368, էջ 367բ—367բ:

⁴ Ցե՛ս Յովհաննես Զուղայեցի, Յաղագս տրամաբանութեան, Անտոնովյան, 1711: Ի՛ դեպ.

1. Ինչպես ասվեց, այն այսօր էլ չի կորցրել իր գիտա-ճանաչողական, մեթոդաբանական ու մեթոդական արժանիքները:

2. Ձեռագրի և տպագրի համեմատությունից պարզվում է, որ առայժմ հայտնի ձեռագիր միակ օրինակը հեղինակային ինքնագիր չէ, այլ տրամաբանությանը ոչ քաջագիտակ գրչի արտագրություն: Այդ են վկայում ձեռագրում տեղ գտած բազմաթիվ բացթողումները, ակնհայտ սխալները, վրիպակներն ու լեզվական մեղանշումները: Ժիշտ է, դրանց զգալի մասը տպագրում չկա, բայց և վերջինս նույնպես գերծ չէ նույնաման թերություններից: Ներկա հրատարակության մեջ, ինչպես երևում է վերջում կցված ծանոթագրություններից, դրանք ըստ էության վերացված են:

3. Եթե ձեռագիր միակ օրինակը, ինչպես ասվեց, լի է թերություններով, ապա տպագիրն այսօր մատենագիտական հազվագյուտ օրինակ է, որը չկա նախկին Խորհրդային Միության տարածքի որևէ գրադարանում: Անձամբ ես դրան ծանոթացել եմ ամերիկաբնակ հայագետ պրոֆ. Ավետիս Սաջյանից ստացած լուսապատճենի միջոցով: Այլ խոսքով՝ այն անմատչելի է ոչ միայն հայ փիլիսոփայության պատմություն ուսումնասիրող ուսանողներից և ընթերցող լայն շրջաններից, այլև հայագետ-մասնագետներին:

4. Այս տարվա սեպտեմբերի 18-ին լրանում է Ջուլյայեցու սույն աշխատության ավարտման 900-ամյակը:

Քանի որ տպագիրն, ինչպես ասվեց, որակապես ավելի նախընտրելի է, ուստի ներկա հրատարակության համար հիմք ենք ընդունել այն, իսկ խիստ անհրաժեշտության դեպքում՝ ձեռագիրը:

Ընթերցողի գործը հեշտացնելու նպատակով տեքստում կատարել ենք հետևյալ փոփոխությունները.

1. Բացել ենք կարճագրությունները: Ընդ որում, կարճագրված են ինչպես ամբողջական բառեր, օրինակ, Ած՝ Աստուած, ամ՝ ամենայն, վս՝ վասն, ոսպ՝ որպես և այլն, այնպես էլ բառերի վերջավորությունները, իսկ երբեմն՝ նաև բառարմատի մասնիկները: Օրինակ, հաղորդակցութեմ՝ հաղորդակցութեանն, տեսչութ՝ տեսչութեամբ, պատկանությունք՝ պատկանություններ և այլն:

2. Հաճախ նույնիսկ նույն բառը գրված է տարբեր ձևով: Օրինակ, հավասարապես գործածվում են ընդհանուր և ընթանուր, ստորասական և ըստորասական, սպիտակ և բսպիտակ, եռանգիւնի և քառանկիւնի և այլն: Այդպիսի դեպքերում դարձել ենք միօրինակ:

3. Փոխել ենք կետադրությունը, հարմարեցրել ժամանակակից հայոց լեզվի կետադրությանը: Ընդ որում, ոչ միայն փոխել ենք անկա կետադրական նշաններից շատերը, այլև ըստ անհրաժեշտության ավելացրել ենք նորերը կամ դուրս հանել եղածներից շատերը:

4. Ուղղել ենք ակնհայտ սխալներն ու վրիպակները, որոնք երբեմն տեղ են գտել թե ձեռագրում և թե տպագրում:

5. Այն դեպքերում, երբ տպագիրն ու ձեռագիրը գործածում են նույն բառի հոմանիշները և դա հասկանալի «օրինակ» բառի փոխարեն՝ որևէ, որպես, որգան, որքար, որպակ, Պրքար, հիպակ, հիգան, հիպես և այլն, նախընտրել ենք թողնել տպագրին:

Հ. Ղ. ՄԻՐՁՈՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Եւ արդ շնորհօք սուրբ հոգւոյն յետ մեծի խուզման քերթողականի մակացութեան պարտ է բանասիրացն բուռն հարկանել զառ ի տրամաբանական զննութեանն՝ առ ի իմաստասիրել զէակս: Եւ տրամաբանին երկեակ ինչ վայել է. նախ՝ զի բանն ոչ յաւէտ և ոչ նուազ արտադրեսցէ: Երկրորդ՝ պարզ և համառօտ, և իմացումն յոլով, որոյ ունկնդիրն անվրէպ մտախոհ լիցի և այլոց ընձեռեսցէ բնական բանականութեամբ, քանզի է զօրութիւն իմն ի միտս մարդկան մակադրիլ ի նա զպատկերս էակաց: Եւ ամենայնի խուզումն եռեակօք² ելոյր. գիտութեամբ, իմացմամբ և ճանաչմամբ: Եւ մերթ հաղոր-

Թեև գրքի վրա չի նշված հրատարակության վայրը, բայց ելնելով մի շարք հանգամանքներից, մատենագիտական գրականության մեջ տպագրության վայրը համարվում է Ամստերդամը, իսկ տպագրիչը՝ Դուկաս Վանդեհեյն: Տե՛ս օրինակ, Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավայյան, Հայ գիրքը 1512—1800 թվականներին, Երևան, 1988, էջ 189—190: 104

գուժեամբ միմեանց և մերթ առանձնաբար զմակացելիս զննեն: Եւ յորժամ հաղորդութեամբ և մու տեսութեամբ, է պատկեր էակաց տպագրեալ ի միտս, որզան՝ ի հայելոջ, բայց ի հայելոջ զգալիսս ևեթ, այլ ի միտս՝ զգալիս և դիմանալիս՝ սահմանաւ հանդերձ: Եւ յորժամ առանձնաբար՝ գիտութիւն ի վիրայ զգալեաց ասի և բաղադրեցելոց, վասն որոյ սահմանի այսպէս՝ գիտութիւն է լոյս, ուղղիչ մարդոյ ի գործել և ի կիր առնուլ զժամանակաւորս: Եւ իմացումն ի վերայ իմանալեացն առնանի՝ հրեշտակաց, դիւաց և հոգւոց նովաւ իմաստասիրի, սակս որոյ սահմանի այսպէս. իմաստութիւն է տեսութիւն ճշմարտութեան՝ իաղադացուցանող բոլոր մարդոյն: Իսկ ճանաչումն է կրկեակ. անհասանելոյ և մոռացելոյ, վասն որոյ Աստուծոյ և Աստուածայնոյն ըմբռնումն՝ ասի ճանաչումն: Եւ գիտութիւն, և իմացումն յաղագս նորուն ոչ ածի ի գործ, վասն որոյ սահմանի՝ ճանաչումն է լուսաւորութիւն խոհեմութեան բանականին, որով ճանաչեալ լինի էակն անհասանելի: Այլ բանք և դիտաւորութիւն տրամաբանից ոչ է առ առանձնաբարսն, այլ տինա հաղորդակցութեանն: Յաղագս որոյ զորինչև ըմբռնի եռեակիւքս՝ եթէ ունիցի պատկանաւորութիւն իրի առ այլ իմն, ասի շարամանութիւն և թէ ոչ՝ պարզառութիւն, քանզի տրամաբանական մակացութիւն սոքօք ելոյր:

Այլ նախ՝ արժան է ի ձեռնարկութիւնս, որոց և իցէ զօգուտն, մտախոհ լինիլ և ապա ձեռնամուխ լինել: Այլ այսմ եռեակ՞ պահանջի. զինչ, զօգուտ և զկարգաւորութիւն: Տրամաբանութիւն է, ըստ Արիստոտէլի, հարցումն պատասխանելոյ, և ըստ այլոց՝ գործիք կարգաւորական, որով ըմբռնի միտք ի սխալմանէ ճանաչելեացն: Իսկ օգուտն՝ ոչ երբք թողացուցէ զմիտս վրիպիլ ի յըմբռնումն էակաց: Եւ կարգաւորութիւն է, որ ի պարզառութենէ և ի շարամանութենէ ծանօթից յիմանալիսն մխեսցի և ոչ երբք վրիպեսցի յիմաստս: Բւրեմն, նախ՝ զպատկանաւորութիւնս և ապա՝ զպարզառութիւնս պարտ է իմաստասիրել:

Եւ արդ՝ երրակի ելոյր պատկանաւորութիւն: Առաջինն է հաւաքաբանական, երկրորդ՝ թէական, երրորդ՝ տրոհական:

Հաւաքաբանական

Ամենայն մարդ կենդանի է:

Ամենայն կենդանի գոյացութիւն է:

Ուրեմն՝ Ամենայն մարդ գոյացութիւն է:

Թէական

Եթէ Արեգակն ծագեալ է, տիւ է:

Մագեալ է,

Ուրեմն՝ տիւ է:

Տրոհական

Թիւս այս դար է կա՛ կոճատ:

Դար է:

Ուրեմն՝ ոչ է կոճատ:

Եւ որք ոչ այսպէս, են պարզառութիւնք, զի ամենայն մակացութիւնք յայսոսիկ պարագրին:

Եւ ամենայն պատկանաւորութիւնք յերակաց պարզառութեանց տնօրինի. յենթակայէ, ի ստորագիցելոյ, և ի միակերտէ միջնորդէ. որզան՝ շարամանութիւնս այս՝ Պետրոս է մարդ, խնդրի զՊետրոս, որ է ենթակայ և զմիջնորդն՝ է, և զստորագայն՝ մարդ, և յորժամ զուգէսցին երրեակքս՝ ասի պատկանաւորութիւն, շարամանութիւն և նախադասութիւն: Բայց ի ստուգագոյն տրամաբանսն ոչ ասին սոքա մասունք շարամանութեան, այլ տնօրինիչք, իզան՝ տուն կազմեալ, այլ արուեստագէտքն ոչ են մասունք տան:

Ամենայն մակացելիք, պատկանաւորութիւնք և պարզառութիւնք յերկեա-

կրս տրամատի. առաջինն է, որ ի մակացութիւն նորին ոչ երբեք կարօտասցի խոկման, հիզան՝ տեսութիւն ջերմութեան և ցրտութեան լուսոյ և խաւարի, և սոյնպիսեաց ասի յայտնաբանական: Երկրորդ, որ ի տեսութիւն կարօտասցի խոկման, որզոն՝ մակացութիւն հրեշտակաց, դիւաց և հոգւոց՝ ասի խոկումն:

Սոյնպէս և շարամանութիւն. առաջինն է յայտնաբանական, որ ոչ իմիք կարօտի խոկման, որպէս Արեգակն ջերմ է և ձիւնն՝ ցուրտ: Երկրորդ, է, որ կարօտի, որզան՝ Ստեղծօղ էիցս է, և արարածս ստեղծեալ է: Եւ է դարձեալ ի մակացեղեացն, որ անմիջաբար ըմբռնի, հիզան՝ ընդհանուր յոլով քան ըզմասն, և զետեղութիւն էի և շէի ի միասին: Եւ է, որ⁴ փորձիւ, հիբար՝ սպեղանի, որ յաղագս վիրի և դեղ սակս մաղձի: Եւ է, որ ի լսելոյ գայ ի մակացութիւն, որոյ ոչինչ ելոյր՝ ստութիւն յոլովից վկայեցելոց, և ասի հաստատական սերումն, հիպէս՝ գիտութիւն Երուսաղէմի, և թագաւորաց և մարդւրէիցն եղելոց: Եւ է, զի կարօտասցի միջնորդի յաղագս ծանուցանելոյ և ոչ պատկանաւորելոյ, հիզան՝ դարն զոյգ է, որ ի հաւասարութէնէ է: Եւ է, զի հայեցմամբ և տեսչութեամբ, հիբար՝ լուսաւորութիւն լուսնոյն, զի հայեցեալ տեսանի՝ որքան հուպ ելոյր Արեգակն, նուաղի ի լուսոյ և որքան ինչնայ, լնանի, վասն որոյ ի խոկումն գամք՝ յԱրեգակնէն լուսաւորեալ: Այլ ոչ եթէ յաղագս այսպիսեացս է և որինչ հանգոյն սոցին տրամաբանականին իմաստութիւն, այլ տինա սակս պատկանաւորութեան շարամանութեան և նախադասութեան, որով եղանի եզրակացութիւն: Եւ յորժամ կերպարանք էակաց ի միտս տպագրեսցին ըստ այնմ, որ գաղափար է նմին, ասի գիտութիւն և ըստ այնմ, որ ձևացի ի միտսն, էակ մտաց ասի, և ըստ այնմ, որ ձայնիւ մակացու ելոյր, ասի ուսումն:

Եւ ըստ այսմ ամենայն գիտութիւն անծանօթի ծանօթիք ծանի, եթէ պարզառութեանց, եթէ շարամանութեանց և թարց նոցունց ոչ ել կար, հիպէս՝ պարզառութիւն կենդանւոյ համազուգելով ընդ բանականին, ասասցի կենդանի բանական, և յայսմանէ պարզառութիւն մարդոյ, որ ոչ էր ծանուցեալ, ծանուցանի: Նմանապէս և շարամանութիւն, հիզան՝ արարածս փոփոխական է, համազուգելով ընդ շարամանութեանն, որպէս՝ որ ինչ փոփոխական է, եղեալ է, եզրակացուցանի՝ ուրեմն, արարածս եղեալ է: Յետ այսորիկ պարտ է գիտել, թէ որով տարբերի մարդն յայլմէ, զի նա զիմանալիսն երևելիօք իմաստասիրէ, և այլքն՝ ոչ: Ուրեմն հարկաւորի, զի բանականաւ զուղղութիւն և զթիրութիւն ենթադատեսցէ և տրամաբանական հաւաքաբանութեամբ մեկնումն արասցէ: Իսկ որք հողումն են սոցայցր և ոչ իմիք կարօտասցին յայտնաբանութեան, այլ մերկապարանոց յայտնի: Յայտնի պարզառութեան ծանուցիչ ասի և իմանալոյն ծանուցեալ: Նմանապէս և շարամանութեան առաջնոյն բնական բանականութիւն և իմանալոյն՝ խոհական ենթադատութիւն: Ուրեմն հարկաւորի յարուեստս տրամաբանական հաւաքաբանութեան զայսուիկ ճանաճել, զի թարց սոցայցր ոչ ելոյր մակացութիւն, զի իմացումն մարդոյն ոչ էր վարկպարազի, այլ մակացութիւն կենդանւոյ բանականի: Նմանապէս և շարամանական նախադասութիւնքն ոչ են ի նանիր, այլ եզրակացուցոց իմանալոյն: Ուրեմն՝ հետազօտութիւն մակացութեանց սոցին ոչ է ունայն, այլ իմաստասիրութիւն ասացելոցս մակադրութեանց, քանզի ամենայն օգտութիւնք յայնց ելոյր: Ուրեմն, նախ՝ զձայնն, և պպա՝ զիմացումն պարտ է զննել: Վասն որոյ երկակի ենթադատի ձայն՝ յօդեալ և անյօդ. յօդեալ, հիկէն՝ մարդոյ, և անյօդ, հիզան՝ անասնոյ: Եւ երկաքանչիւրքն երկակի՝ նշանական և աննշանական: Յօդեալ նշանական, որզան՝ մարդ կամ ձի, զի գրով է և նշանակէ զմարդ և զձի, իսկ յօդեալ և աննշանական, որզան՝ հիջերուաքաղ: Թէպէտ յօդեալ, այլ ոչ նշանական, իսկ անյօդ և նշանական, հիպէս՝ շան, զի է անյօդ և նշանակէ զգալուստ մարդոյ և կամ այլ իմն ազ-

դումն: Անյօդ և աննշանական, հիկէն՝ շաշիւն կառաց: Այլ մակացութիւն յա-
դագս յօդեալ նշանակելոյն է առ իմաստասէրս բան: Իսկ յօդեալն ձայն նշա-
նական երկեակօ է՝ հանրական և մասնական: Հանրական, որպէս՝ մարդ կամ
կենդանի, և մասնական, հիզան՝ Պետրոս: Սա ոչ առնանի ի կիր, զի ան-
հունք են և փոփոխականք, այլ հանրականքն, զի են անփոփոխք, սակս որոյ
և՞ տրամաբանքն նոքօք զհաւաքաբանութիւնն եզերեն, զի և Պղատոն զսո-
ցյանէ իմաստասիրել հրամայեաց և ոչ յանհնիցն:

Եւս ձայնից կամ է կատարեալ իմացումն, կամ՝ ո՛չ: Կատարեալ, որզան՝
մարդ, որոյ աղդումն է կենդանւոյ բանականի և որ ո՛չ, որպէս կենդանի կամ
բանական, որք են մասունք սահմանի մարդոյ, և որ այլակայք՝ պատահումն,
բայց ոչ անհաղորդ, զի և վէմ այլակայ ելոյր, այլ որպէս ծիծաղականութիւնն:

Եւս ձայնից է, որ մու ելոյր, և է, որ քանիք: Եւ իմացմունս ևս կամ մու
կոյր և կամ քանիք: Եւ թէ՛ ձայնն մու, և իմացումն կամ մու ելոյր կամ
քանիք: Եթէ՛ ձայնն և իմացումն մու, ասի անհատ, որպէս՝ Պետրոս, որոյ
իմացումն է կենդանի բանական փաղանունաբար: Եւ եթէ՛ ձայնն մու և իմա-
ցումն յոլով, ասի ընդհանուր: Ձայնն, որ յոլով ելոյր, և իմացումն կամ յոլով
ելոյր կամ՝ ո՛չ: Եթէ՛ ձայնն յոլով և իմացումն մու, ասի համաբան, հիզան՝
մարդ և այր: Եւ եթէ՛ ձայնն յոլով և իմացումն, ասի տարաբանօ, որզան՝ մարդ
և արջաու:

Եւ պարտ է գիտել, թէ ընդէր ասի տրամաբանութիւն և յորս տրամատի:
Հստ սահմանին նոյն էր, որպէս և բացատրեցաւ, և յերբեակս տրամատի՝
ի բաժանական, ի սահմանական և յապացուցական: Բաժանական է, որ զսե-
որս բաժանէ ի տեսակս: Սահմանական, որ զէակս սահմանէ: Ապացուցական
է հաւաստեցուցանել նոյնն հաւաքաբանութեամբ: Եւ հաւաստեցուցանելն է
նոեակ՝ կամ է հանրականաւ զհանրականսն, հիզան՝ ամենայն մարդ է կեն-
դանիօ, ամենայն կենդանի գոյացութիւն է, ուրեմն, ամենայն մարդ է գոյա-
ցութիւն¹⁰: Կամ հանրականաւ զմասնականն, որբար՝ ամենայն մարդ է կեն-
դանի¹¹, Պետրոս է մարդ, ուրեմն, Պետրոս է կենդանի¹²: Կամ մասնականաւ
զընդհանուրն, հիզան՝ մարդ, ձի, արջաու և այլք զնեքինն շարժեն կլափ
յուտելն, ուրեմն, ամենայն կենդանի: Յերրակացս առաջինն է անվրիպելի
և այլքն ոչ նոյնպիսի: Ամենայն մակացելի՝ է, որ միջնորդի ըմբոնի և է, որ՝
ո՛չ: Որ ոչ միջնորդի, որպէս բացատրեցաւ՝ ընդհանուր յոլով մասին: Իսկ
միջնորդի վեցեկի՝ եոեակ ձայնի և եոեակ՝ ո՛չ: Ձայնի, որզան՝ Պետրոս,
որ զսահման և զընութիւն ենթադատեսցէ, և թարց ձայնի, որզան՝ գիր տե-
սանելով, զթաքնութիւն նմին իմաստասիրեսցէ և զկապս մատանց թուելով՝
զորքանութիւնն, և զնշաւակ տեսանելով՝ զմղոնսն, և զյօնեօք ակնարկելն՝
զազդումն: Երկրորդ, որ ըստ բանականութեան՝ ձայնի և թարց ձայնի: Ձայ-
նի, որզան՝ ձայն գառին, որ յայնկոյս որմոյն, և թարց ձայնի, հիզան՝ ստեղ-
ծուածս առ ստեղծօղն: Երրորդ, ըստ բնութեան՝ ձայնի և թարց ձայնի: Ձայ-
նի, որզան՝ հազ, որ զցաւս սրտին բացերևոցէ: Եւ թարց ձայնի, հիպէս ա-
րագութիւն երակաց, որ զցաւս մարմնոյն յայտնէ յամբոխմանէ տարերաց:

Յարհեստս տրամաբանականութեան նախկնոյն յաղագս է խուզումն,
քանզի իմաստասիրականն օգտութիւն յայնմանէ է ենթակայելով, և ամենայն
ստորագելիք բղխին՝ եթէ ինքնակայք, որզոն՝ գոյացականք, եթէ այլակայք,
հիզան՝ պատահականք: Զի կանոն է հաւաստական բանականութեան, զի ան-
մեկնելիք են յենթակայից, զի ինքնագոյքն ստորագելիք են ինքնակայք, իսկ
այլովքն այլակայք, յաղագս որոյ յիմաստասիրելն զենթակայէն, իմաստա-
սիրին և նոքա: Բայց յիմաստասէրսն այլևայլ են խուզումն ստորագելիցն,
զի ոմանք ասացին՝ ոչ կայանան ըստ ինքեանց ստորագելիքն ընդհանուրք,
այլ ի տրամախոհութիւնս, և այլք, թէ ըսա ինքեանց են, զի համառօտաբանն

Պղատոն ասէ՛ և՛ է, և՛ լինի, և՛ ի բաղազանութեան է, ասելով, նախքան ըզրազումս ասէ գոլ, և լինի ի վերայ նիւթոց, և ի բաղազանութեան է՝ այսինքն՝ ի տրամախոհութիւնս, հիպէս՝ կնիք իմն, որ ի բազում մոմս տպագրի, ըստ Դաւթի, զի կնիք նախքան զմոմս է, և տպագրեցաւ ի նոսա, և տեսանելով դնոսա, ի տրամախոհութիւնս մեր երևի, և այլք ասեն, թէ ի բանն Աստուծոյ կայ և ոչ ըստ ինքեան, և բանին Աստուծոյ է, և տպագրի և ի տրամախոհութիւնս մեր երևի: Եւ ըստ բանականի Արիստոտէլ յարացուցիւ հաւաստեցուցանէ, հիզան՝ իշխան, որ ունի յինքեան զկարգաւորութիւն և յինքենէ ի զօրսն, և յայնց ի տեսողսն, այսպէս և ընդհանուրքն նախ՝ ի բանն Աստուծոյ էացեալ և ապա՝ ի նիւթս, և վերջոյ՝ ի տրամախոհութիւնս: Եւ Պրօկղոս բնականաւ հաւաստեցուցանէ, ասելով՝ ամենայն յաւիտենականաց նախկին է յաւիտեանն և ամենայն ժամանակաւորաց՝ ամանակն, քանզի յամենայնի նախկին քան շունչսն են ունելիքն, և ըստ Ալբերթի ամենայն բաղադրեալ է յետոյ քան վայնս, յորոց բաղադրին, որզան՝ մարդ բաղադրեալ ի քառից, ուրեմն, քառեակքն¹⁸ նախ: Եւ այլք ասեն՝ ի տրամախոհութիւնս ևեթ երևին ամենայն ընդհանուրք և արտաքոյ՝ ոչ էացեալ, և այլք՝ թէ ի յենթակայս ևեթ և արտաքոյ՝ ոչի՛նչ:

Ի մակացութիւնս էակաց է, որ ունի արգելումն¹⁴ բազում ելոյ կամ ո՛չ: Եթէ է, ասի անհատ, որ յատկացեալ իցէ ամենայնիւ և թէ ո՛չ, ասի ընդհանուր: Եւ ընդհանուր է մի ինչ, որ բնաւորեալ է ի յուրվս, ևս՝ ընդհանուր է, որ բնաւորեալ է զյուրվից ստորոգիլ: Եւ է, զի ձայնն մու և իմացումն զանազան, հիրար՝ շուն, և է, զի ըստ ստորոգման, հիկէն՝ սեռ և տեսակ, և այս ևս՝ կամ ի յուրվից կամ՝ ո՛չ: Եթէ ի յուրվից, է երկեակ՝ կամ է հունաւոր, կամ՝ ո՛չ: Հունավոր, որզան՝ եօթնեակ մուրակք, և ո՛չ, հիզան՝ մարդ, որ է անհուն, զի յաւէժ է ի հոսման և ի ծորման, ըստ այսմ է անհուն, և ոչ յազազ անթուելութեան: Եւ թէ մու էացեալ իցէ, կամ կարելի ելոյր այլոցն ևս էանալ, կամ անկարելի: Կարելի, հիզան՝ Արեգակն, որ մու է, և այլոյ ևս ելոյ կարելի յստեղծչէն, և անկարելի, հիզան՝ մի Աստուածութիւնն, և այլևս ել անկարելի: Եւ որ ոչ է էացեալ, կամ ելոյր կար լինիլ, կամ՝ ո՛չ: Որոյ ել կար, հիզան՝ եղջերուաքաղ, և որ ո՛չ ել կար, հիզան՝ միւս ևս Աստուած:

Ի բացատրութիւն ընդհանրին՝ բացատրի և մասն, զի հասարակական կանոն է տրամաբանից՝ անհատական ելոյր ի պարագրողէն, զի իմացումն նորին թարց սորին ոչ ել կար, այլ ոչ անդրադարձաբար, զի ոչ հարկաւորի՝ ելոյ մարդոյ ելոյ կենդանոյ և յոչ ելոյ՝ ոչ: Ելոյ Պետրոսի, ելոյ մարդոյ և յոչ ելոյ՝ ոչ, զի թէպէտ Պետրոս ոչ է, սակայն այլքն են: Եւ թերևս գոնեայ առարկեսցի՝ Պետրոս, Պօղոս և Յօհաննէս և այլքն անհատք տարաբարձցի, բառնի և բոլորն: Արդ՝ այսոքիկ բոլորք են, այլ ոչ անհատք: Այլ բանս իմ ոչ յազազ բոլորին է, այլ մու անհատի, զի տարաբարձումն մու անհատի¹⁵, ոչ հարկաւորի բոլորի, և բոլորին՝ տարաբառնի և մասն: Սապէս և այլակայքն՝ ելոյ ինքնակայի, ելոյր և յոչ ելոյ՝ ո՛չ: Սակս որոյ ընդհանուրքն մշտակայք, ինքնակայք և անփոփոխք, և այլքն՝ ո՛չ նոյնպէս: Բայց ոմանք առարկեն. ոչ ելոյր հարկուր ելոյ անհատից ոմանց լինիցին հանուրք, այլ ինքեանք ևեթ, հիզան՝ Արեգակն և Լուսին, որք մու անհատք են թարց հանրից, վասն որոյ ոչ ել հարկաւոր ելոյ մասին, ելոյ ընդհանրին:

Արդ՝ յորժամ յէակացն պարզ ելոյր և ոչ ընդ միոյ իմիք բաղադրեալ, ասի պարզ էակ, քանզի յէակացն որքան ի վեր ելանէ պարզի, հիպակ՝ Պետրոս, որ ենթակայելով սեռի և տեսակի, ստորոգիցելոց և այլակայիցն պատահիցելոց, է ծայրագոյն բաղադրութիւն, զի ամենայն գոյացականք ի նրմանէ ստորոգին ըստ ստորոգման և այլակայքն ըստ կայանի, յազազ որոյ ծայրագոյն բաղադրութիւն, զի ամենեցունց է ենթակայ և յայնմանէ որքան

ի վեր ելանէ, պարզի այնքան, որքան ի բաղադրիցելոցն ունայնասցի, որպակ՝ գոյացութիւն, որ ծայր ելով պարզեցաւ, սակս որոյ գոյ կեթ ասի, իսկ այլքն ո՛չ այսպէս, զի կամ միով, կամ երկակիւ, կամ եռակիւ և աւելի և նուազ են բաղարկոցեալք, սակս որոյ ո՛չ պարզ: Տինա, որ ոչ սահմանի, է պարզ, բանզի յամենեցունց բաղադրութեանց է թափուր և ոչ ընդ միոյ շարայարեալ: Ըն նմանապէս և հակն, այլ որքան բաղադրի և սահմանի: Եւ բաղադրութիւն է նրկեակ՝ կամ է ի կատարիցելոց միակաց, կամ՝ ո՛չ: Եթէ է ի կատարիցելոց, ասի կատարեալ և թէ ոչ՝ անկատար: Քանզի ի միակերտից է բաղադրութիւն, և միակերտքն են երկեակ¹⁶. կամ ըստ ինքեան է, կամ՝ ո՛չ: Որ ըստ ինքեան, ասի կատարեալ: Եւ այս ևս երկակի՝ կամ եռեակ ամանակս յայտնէ, կամ՝ ո՛չ: Որ զերեակս¹⁷ ամանակ, է բայ, և որ ոչ, է անուն: Եւ որ ոչ ըստ ինքեան, է անկատար, հիզան՝ վաղ վաղ: Եւ յորժամ յէակացն ենթակայացելոցն ընդ ստորոգիցելոցն զուգեալ ասասցի, սահման ասի և յորժամ ընդ այլակայիցն՝ մակածական, որզան՝ Պետրոսի առիծ:

էակք ամենայն յերկեակս տրամատի՝ ի գոյացութիւն և ի պատահումն և յայնմանէ ի քառակիս՝ է, որ ոչ նենթակայումն է և ոչ զենթակայէ բացերևոցեսցի, որզան՝ ոմն մարդ: Եւ է, որ հակ սորին՝ նենթակայումն և զենթակայէ, որպակ՝ հասարակքն պատահք, զի նանձին է յենթակայումն և զենթակայէ ասի յիւրոցն մասանց, որբար՝ առաքինութիւնն¹⁸ նանձին է մարդոյ և զենթակայէ ասի, որպակ՝ ի խոհեմութենէ, յարիութենէ, յողջախոհութենէ և յարդարութենէ և յայլոցն մասանց: Եւ է, որ ոչ նենթակայումն է և զենթակայէ, որզան՝ տեսակ և սեռ, զի յումեմնէ ասի զմարդոյ: Եւ է, որ նենթակայումն և ոչ զենթակայէ, հիզան՝ ոմն սպիտակ: Եւ քառակի էակք դարձեալ ի քառորդս տրամատի, զի է, որ հոմանունաբար, որբար՝ ակն, և է, զի փառանունաբար, որպակ՝ ծիծաղական զմարդոյ և անդրադարձապէս նոյնական բանակութեամբ, և է, որ դասանունանաբար¹⁹, որզան՝ գոյացութիւն նախ ելով քան զպատահումն, և է, որ յարանունաբար²⁰, որպակ՝ առաքինի, որ յառաքինութենէ, քանզի ըստ բանականութեան էակք յայտոսիկ տրամատին: Բանն է երկեակ. է, որ ներտրամադրեալ, և է, որ արտադրեալ: Ներտրամադրեալ է իմացումն, յորս տպագրի պատկերս էակաց, իսկ տրամադրեալն է ձայնիւ, սակս որոյ ձայնն է քառակի. է, որ ձայնն պարզ, և իմացումն բաղադրեալ, հիզան՝ յառնեմ, և է, զի ձայնն բաղադրեալ և իմացումն պարզ, որգոն՝ մարդ կենդանի, բանաւոր, մահկանացու, և է, զի ձայնն և իմացումն պարզ, հիպէս՝ Պետրոս և Պօղոս, և է, զի ձայնն և իմացումն բաղադրեալ, որզան՝ Պետրոս քարոզէ, Պօղոս աստուածաբանէ: Եւ ի սոցանէ ի տասն: Որ ինքնակայ, գոյացութիւն, և որ այլակայ՝ իննակայ:

Գոյացութիւն է երկեակ՝ առաջին և երկրորդ: Առաջինն է, որ ոչ զենթակայէ և ոչ նենթակայումն ասի, որզան՝ ոմն մարդ կամ ոմն²¹ արջառ, իսկ երկրորդն յերկեակս տրամատի՝ ի տեսակս և ի սեռս, որ զենթակայէ է և ոչ նենթակայում: Տեսակ է, որ զյոյովից²² և զտարբերեցելոց թուով ի ներում դինչէն, իսկ սեռ է, որ զյոյովից և զտարբերեցելոց տեսակաց ի ներում զինչէն: Եւ ի սոսա ոչ է յաւէտ և նուազ, և ոչ ներհակ, բայց է ներհակաց ընդունուակ, քանզի որ միևնոյն թուով է, ներհակաց ընդունակ է:

Եւ որչափ՝ է քանակ: Եւ է երկեակ. շարունակ և տարորոշ: Շարունակ վեցեակ. կէտ, զիծ, մակերևոյթ, մարմին, ամանակ և տեղի, իսկ տարորոշ երկեակ. թիւ և փաղառութիւն, զի ոչ ունին հասարակ սահման, զի երկեակ հինգ, որ է տասն, ոչ ունին մէջ որով կցին, իսկ եթէ զմու առեալ դիցես, մետասան ելոյր, յաղագս որոյ մնայ տարորոշ: Նմանապէս և փաղառութիւնն, որզան՝ Պետրոս, զի ոչ ունի պետին և ըոսին մէջ: Եւ ոչ է ի սոսա յաւէտ և

նուազ; և ոչ ներհակութիւն, զի կանգունս այս ոչ է յաւէտ. և նուազ այնմ և ոչ ներհակ:

Եւ որ առ այլս վերարբերի՝ առինչ, որզոն՝ ծառայ: Եւ է երկեակ. պարզ և բաղադրեալ: Պարզ, որզան՝ հայր, զի ոչ է որդուվ էացեալ, իսկ բաղադրեալ, որբար՝ մասն, զի է ընդ բոլորին և պարագրեալ և թարց նորին ել անկար: Եւ է, որ ըստ ինքեան, որբար՝ թև, զի թարց թևաւորի իմանի, և է, որ այլով, որզան՝ ծառայ, զի թարց տեառն անկարելի: Եւ է սորա զյաւետն և զնուազն, հիպակ՝ ոմն առաւել նման ումեմն, և է, որ ոչ, հիզան՝ հայր: Եւ ելոյր ներհակութիւն, որբար՝ առաքինութեանն շարութիւն և ոչ ամենից, զի ոչ է մեծն փոքեր ներհական:

Եւ որ կերպացուցանէ՝ որակ, և է երկեակ. որակ և որակութիւն, որզան՝ շար և շարութիւն: Եւ է սորա, որ բնաւորաբար, հիզան՝ սևութիւն ազոաւու: Եւ է, որ յետամտական, որբար՝ առաքելութիւն սրբազանին Պօղոսի: Եւ է, որ միոյր միայնոյր, որպակ՝ շնորհքն Բեռելիէլի²⁸: Եւ է, որ բոլորի, որզոն՝ ծիծաղականութիւն մարդոյ: Եւ է, որ ուսմամբ, հիզան՝ Արիստոտէլի: Եւ է, որ դժուարաշարժ²⁴, որպակ՝ հիւանդութիւն երեսուն և ութ տմ հիւանդին: Եւ է, որ դիւաշարժ, որզոն՝ յառնել: Եւ է, որ ախտ է, որբար՝ երկիւղ: Եւ է, որ ախտարար, հիզան՝ շառագունիլ: Եւ է, որ կիր, որպակ՝ քաղցրութիւն մեղեր: Եւ է, որ կրական, որզոն՝ ջերմութիւն: Եւ՝ ըստ որակիս է կերպ և ձև: Զան է ըստ տեսութեան եզերաց, իսկ կերպն՝ միջնովքն: Եւ սորա է զյաւէտն և զնուազն, զի առաքինութիւն սրբազանին Լուսաւորչի յաւէտ է: Եւ՝ և սորա է ներհակութիւն, որզոն՝ առաքինութեանն շարութիւնն և ոմանց՝ ոչ, զի եռանկիւնին ոչ է քառանկիւնտյն, և արդարութիւն արդարութեան, և քերականութիւն քերականութեան: Եւ ուրոյն²⁶ է որակին. նման և աննման:

Եւ, որ ներգործէ՝ առնել, և է երկեակ. ածել և անածել: Ածել է ներգործութիւն իմն առ այլս, և ոչ ածել է, որ ոչինչ ածի, հիզան՝ տեսութիւն լերին: Եւ է ածելն երկեակ. միջաբար և անմիջաբար: Միջաբար, հիզան՝ հիւսանն Վփայտն հատանել սղոցիւ, և անմիջաբար, որբար՝ ստեղծանել: Եւ ոչ ածել նմանապէս է երկեակ. եզօրէն, որպակ՝ գնալ, զի ոչ է յայտնի առնողն և կրողն, կրկնօրէն, հիբար՝ բացատրող և բացատրեալ, զի այլևայլ են: նմանապէս ընդունող և ընկայելն²⁸ ևս է առնլոյն, որ ոչ պարզաբար զառնելն ցուցանէ²⁷, հիպէս՝ գերութիւն: Եւ է, որ պարզաբար, որբար՝ զինել: Եւ է սորա զյաւէտն և զնուազն, զի ցրտացուցանել յաւէտ և նուազ ելոյր, և է ներհակ սորա՝ ջեռուցանել ցրտացուցանելոյն²⁷: Եւ՝ ունի շարժումն և ոչ շարժումն, հիբար՝ հարկանել և ո՛չ, հիբար՝ ուսումն:

Եւ որ ներգործի՝ կրել, և է երկեակ. զոյացարար, որբար՝ ծնանիլ և պատահարար, որկէն՝ տրտմիլ: Գոյացականն ևս է երկեակ. լինիլ, որպակ՝ ստեղծանիլ, յապականիլ, որզան՝ մեռանիլ: Եւ պատահարար ևս երկեակ. ներքնոյն, հիպէս՝ բերկրիլ և արտաքնոյն, հիբար՝ մկրտիլ: Եւ է սորա յաւէտ և նուազ. որկէն՝ տրտմիլոյն և ուրախանալոյն, ևս՝ և ներհակ:

Եւ որ գտեղի բացերնոցէ՝ ուր, և է երկեակ. ներքին, որզոն՝ ի տան և արտաքոյ, հիպէս՝ զտամր: Եւս է սորա հակակայք. վերին և ներքին, և ոչ է սորա յաւետ և նուազ, և ոչ՝ ներհակութիւն: Եւ՝ ուր մարմնոյ է, հիզան՝ ուր բազմի, և ոչ անմարմնոյ, զի անտեղի է:

Եւ որ զամանակն՝ երբ, և ոչ է ամանակ, այլ որինչ ամանական, և է հոռեակ. նախ՝ ըստ անցելոյն, որզան՝ յեռանդեան: Երկրորդ, ներկային, հիւսակ՝ այժմ: Երրորդ, ըստ ապագային, որզոն՝ վաղին, և ոչ է սորա զյաւէտն և զնուազն, որպակ՝ այսօր վաղուեան, և ոչ՝ ներհակութիւն:

Եւ որ զետեղեալ՝ կալ, և է երկեակ՝ զգայնոյ, որբար՝ մարդոյ և անզգայնոյ, որկէն՝ աշտանակի: Եւ ոչ է սորա զյաւէտն և զնուազն, հիպէս՝ ընկող-

մանումն և ոչ ներհակութիւն: Եւ՝ ըստ մարմնոյ է. հաստատութիւն և ոչ: հաստատութիւն, հիզան՝ ծովու, և ո՛չ, հիպակ ննչումն:

Եւ որ ունի՝ ունել և է եռեակ. առաջինն է զորակական, զի ունօղն յունելոյն որականայ, որզան՝ առաքինի, որ յառաքինութենէ: Երկրորդ, զետեղականն, և այս եռեակ. կամ է ստացարար, որպակ՝ պատմութեան, որ յանձին, կամ՝ մասն ամբողջականին, որբար՝ ունչն ի մարմնի, զի է մասն ի բոլորի, և կամ տարրաբար, որկէն՝ զանձն ի քսակի: Երրորդ, հակադարձականն, հիզան՝ ունել որդի և կին, զի ունելով որդի, ասի հայր: Եւ է սորա յաւէտ և նուազ, զի Պետրոս յեռանդեան նուազ ունէր զառաքինութիւն քան այժմ: Եւ է ներհակութիւն, զի ունել մակացութիւն ներհակ է տգիտութեան, բայց յայսցանեաց ոչինչ ելոյր արտաքոյ և ոչ իմանի:

Ամենայն ընդհանուրք ի նոյնութեան են և ոչ փոփոխին, քանզի է ի բառից, որ զիմացումն իրաց ցուցանէ, որ ոչ մասն ելոյր իմացման և ոչ արտաքոյ իմացման, որբար՝ դուռն տան, ոչ մասն տան, և ոչ արտաքոյ տան: Իւ այս կամ կատարեալ ծանուցանէ զիմացումն, կամ՝ ո՛չ: Եթէ կատարեալ, ի բոլոր, հիզան՝ մարդ, որ զբոլոր իմացումն բացերևոցէ զկենդանի բանականն: Եւ որ ոչ՝ զմու մասն. կամ կենդանի, կամ բանական: Եւ բառից է, որ ընդհանուրն և է, որ զմասնատրն բացերևոցէ: Եւ ընդհանուրն երկեակ՝ կամ յամենայնում միապէս ստորոգի, կամ՝ ո՛չ: Որ յամենայնում միապէս, ասի հասարակ, հիբար՝ մարդ ի վերայ մասանց իւրոց հաւասարաբար: Եւ թէ ոչ՝ հասարակ, որբար՝ էութիւն ի վերայ գոյացութեան և պատահմանցն իննակաց անհաւասար:

Եւ դարձեալ բառից է, որ մու ելոյր և իմացումն ներհակօրէն, ասի հոմանուն, որպակ՝ ակն: Եւ է, որ մու և իմացումն, ասի համանուն, որբար՝ այր և մարդ, որպէս նախնումն բացատրեցաւ: Այլ զի տասունք սկզբունք ըստ ինքեանց են գոյացականք և առ այս պատահական, հիզան՝ մատանի. յստ ինքեան է գոյացական և առ մատն պատահական, վասն որոյ մասնականին է յաւէտ և նուազ, զի շարժականք են: Եւ սա վեցեկի. լինելութիւն, ապականութիւն, աճումն և նուազութիւն, տեղւոյ փոփոխութիւն և այլայլութիւն: Նախկինք և երկրորդք են հնգեկի. առաջինն է ըստ սերականութեան, որզան՝ կատարեալ պատճառ և պատճառելի, զի համանգամայն են ի միասին և ոչ կրթք թարց միմեանց իմանի. ձեռին և բանալոյ, որ ի բանալ դրան համանգամայն շարժին, զի թէպէտ նրբատեսութեամբ մտաց շարժօղն նախկին երևի, բայց՝ ոչ: Երկրորդ, անկատար պատճառ և պատճառելի. է և ըստ բնութեան նախ և հուսկ, որբար՝ մու և երկեակ, զի մինն նախկին ելոյր բնութեամբ քան շերկրորդն, զի կարելի ելոյր ելոյ նախկնոյն թարց երկրորդին. և այսպէս հակառաջնոյն երկրորդս, զի նա թարց միմեանց անկարելի և սա կարելի: Երրորդն է ըստ ամանակին՝ ըստ այնմ, որ էութիւն ինչ ընդ այլ իմն էութեան նախկին և յետին լինիցի, հիզան՝ Ադամ նախ ելով քան զնոյ: Զորրորդ, ըստ տեղւոյ, որպակ՝ ոմն բազմեալ յառաջին բարձին, և ոմն յերկրորդին, և ի ճանապարհս, ոմն նախ քան զմիւսն: Հինգերորդ, ըստ պատուականութեան, որ ի կենցաղաւարութենէ անձինն, հիբար՝ առաքինի և ոչ առաքինի, զի նա յարգեալ և սա՝ ոչ, նա յառաջեալ յամենայնի և սա յետեալ յամենայնի: Եւ են, որ նոյնաբար, որբար՝ կենդանւոյ բանականի ծիծաղական և անդրադարձապէս:

Ամենայն պարզ ձայնից է, որ սատակ ելոյր, որոյ ոչ գուցէ իմացումն, որպակ՝ եղջերուաքաղ²⁸, զի անուն է, և ինքն՝ ո՛չ: Կամ է զարդ և եթ, որգոն՝ հնր, կամ է նշանական, որզան՝ արդար, կամ առնշանական, հիպէս՝ ի, յ, ց, ռ և այլք, կամ է հոլովք՝ եթէ անուան և եթէ բայի և այլոց: Արդ՝ այսոքիկ ոչ պիտոյանան յարուեստս տրամաբանութեան, այլ միայն ուղղականն անուն

և ներկայականն բայ: Բայց յայսցանեացս այլքն են անկատարք և ոչ կազմի նախադասութիւն՝ ստորասութիւն և բացասութիւն, և ոչ յայտնեն զճշմարտութիւն կամ զստութիւն իրաց: Եւ որք կատարեն զսոսա, յենթակայից եղանին և ի ստորոգիցելոց: Քանզի ձայնից եթէ ունիցի զօրութիւն ելոյ ենթակայ, է ուղղական անուն և թե ոչ՝ ներկայական բայ, և յայսցանէ բաղկանայ շարամանութիւն և նախադասութիւն:

Եւ բաղադրեալ է երկեակ. կատարեալ և անկատար: Կատարեալ է, որոյ արտադրութիւնն ոչ ելոյր ընդհատ ի շարամանեալ ստորասութենէ և ի բացասութենէ, սակս որոյ ունկնդիրն ոչ անսայ այլոյ իմիք բացատրութեան, իսկ անկատար է, որ ոչ իցէ այսպէս, և այս՝ կամ յերկակաց փաղառութեանց բաղադրեալ, որզան՝ Պետ-րոս, կամ յերրակաց, որպակ՝ Մատ-թէ-ոս, կամ ի քառից, որզոն՝ Ե-րու-սա-դեմ կամ ի հնգից, հիպակ՝ Դի-ո-նի-սի-ոս, կամ ի վեցից, որբար՝ Նա-բու-զո-դո-նո-սոր, և այլք, և կամ²⁸ յերկակաց բառից, որբար՝ երչերուաքաղ³⁰ և այլք այսպիսիք: Բաղադրութիւնք յուով ելոյր թէ ի վանգից և թէ ի բառից, սակայն ոչ կատարեալք ի բանս հաւաքաբանականս:

Եւ ես անկատար է, որոյ ունկնդիրն անսայ այլոյ իմիք բացատրութեան, և այս յայնժամ, յորժամ ենթակայն բացատրեսցի թարց ստորոգեցելոյ և ստորոգեալն՝ թարց ենթակայի: Իսկ յորժամ կատարեալ իցէ, և շուրցէ ինչ յայնցանեացն ընդհատ, և ճշմարիտ իցէ ստորասութիւնն և բացասութիւնն, յայնժամ իսկ և իսկ նախադասութիւն, և թէ ոչ՝ ո՛չ ելոյր, հիբար՝ հրամայական և հրաժարական, և լուր հիացական և շառագունական, ըղծական և երանական, և կոշական և այլք այսպիսիք, այլ ոչ շարամանականք, սակս որոյ և ո՛չ նախադասութիւնք:

Ձամենայն³¹ մակացելիս, յորում ոչ իցէ ստորասութիւն և բացասութիւն, բաղկացեալ յենթակայէ և ի ստորոգիցելոյ և ի միակերտէ միջնորդէ, և ոչ ճշմարտութիւն, ո՛չ ելոյր նախադասութիւն, քանզի գոյանան ի ներհակէն, յենթաներհակէն, յանորոշէն, յիրաքանչիւրոյն և ի հակասականէն: Ներհակ է, զի երկեակքն իցեն ընդհանուրք: Եւ ենթաներհակ՝ երկեակք մասնաւորք: Անորոշ՝ ոչ յատկացեալ: Իւրաքանչիւրն՝ յատկացեալ: Իսկ հակասական, որոյ մու ընդհանուր և միան մասնաւոր, յաղագս որոյ ոմանք զհակասականն մակագրեցին ծնօղ այլոց և այլք՝ զներհակն և զենթաներհակն:

Եւ արդ՝ կարելի ելոյր հնգեկի հակասութեամբս կազմել նախադասութիւնս՝ հարկււորաւ, կարելեաւ, անկարելեաւ, բայց ոչ ըստ եղանակի:

Հարկւորաւ և ներհակին ստորասութեամբ, հիզան՝ ամենայն մարդ բանական է, ամենայն բանական գոյացութիւն է, ուրեմն՝ ամենայն մարդ գոյացութիւն է:

Բացասութեամբ՝ ոչ ոք մարդ է քար, ամենայն քար է անզգայ, ուրեմն՝ ոչ ոք մարդ է անզգայ: Այս է ըստ կանոնի, զի է ուղղակի:

Կարելեաւ և ներհակին ստորասութեամբ՝ ամենայն մարդ է շուօղ, ամենայն շուօղ է շարժուն, ուրեմն՝ ամենայն մարդ է շարժուն:

Բացասականաւ՝ ոչ ոք մարդ է սեաւ, ամենայն սեաւ է³² որակ, ուրեմն՝ ոչ ոք մարդ է որակ:

Անկարելեաւ և ներհակին ստորասութեամբ՝ ամենայն մարդ է անապուն, ամենաթս անասուն է անմարմին, ուրեմն՝ ամենայն մարդ է անմարմին:

Բացասականաւ՝ ոչ ոք մարդ է զգայուն, ամենայն զգայուն է ծիծաղական, ուրեմն՝ ոչ ոք մարդ է ծիծաղական:

Հարկւորաւ և ենթաներհակին ստորասութեամբ՝ ոմն մարդ է բանական, ոմն բանական է կենդանի, ուրեմն՝ ոմն մարդ է կենդանի:

Բացասականաւ՝ ոմն մարդ ոչ է անմարմին, ոմն անմարմին ոչ է փայտ, ուրեմն՝ ոմն մարդ ոչ է փայտ:

Կարելիաւ և ենթաներհակին ստորասութեամբ՝ ոմն մարդ է արդար, ոմն արդար է սուրբ, ուրեմն՝ ոմն մարդ է սուրբ:

Բացասականաւ՝ ոմն մարդ ոչ է սուրբ, ոմն սուրբ ոչ է արդար, ուրեմն՝ ոմն մարդ ոչ է արդար:

Անկարելի և ենթաներհակին ստորասութեամբ՝ ոմն մարդ է քար, ոմն քար է փայտ, ուրեմն՝ ոմն մարդ է փայտ:

Բացասականաւ՝ ոմն մարդ ոչ է բանական, ոմն բանական ոչ է գոյացութիւն, ուրեմն՝ ոմն մարդ ոչ է գոյացութիւն:

Հարկաւորաւ անորոշին ստորասութեամբ՝ է մարդ բանական, է բանական կենդանի, ուրեմն՝ է մարդ կենդանի:

Բացասականաւ՝ ոչ է մարդ փայտ, ոչ է փայտ անասուն, ուրեմն՝ ոչ է մարդ անասուն: Կարելիաւ անորոշին ստորասութեամբ՝ է մարդ արդար, է արդար սուրբ, ուրեմն՝ է մարդ սուրբ:

Բացասականաւ՝ ոչ է մարդ շար, ոչ է շար անշարժ, ուրեմն՝ ոչ է մարդ անշարժ:

Անկարելիաւ անորոշին ստորասութեամբ՝ է մարդ փայտ, է փայտ քար, ուրեմն՝ է մարդ քար:

Բացասականաւ՝ ոչ է մարդ կենդանի, ոչ է կենդանի շարժուն, ուրեմն՝ ոչ է մարդ շարժուն:

Հարկաւորաւ իւրաքանչիւրոյն ստորասութեամբ՝ Պետրոս է բանական, բանականն է կենդանի, ուրեմն՝ Պետրոս է կենդանի:

Բացասականաւ՝ Պետրոս ոչ է փայտ, փայտ ոչ է քար, ուրեմն՝ Պետրոս ոչ է քար:

Կարելիաւ իւրաքանչիւրոյն ստորասականաւ՝ Պետրոս է երաժիշտ, երաժիշտ է երգեցիկ, ուրեմն՝ Պետրոս է երգեցիկ³⁵:

Բացասականաւ՝ Պետրոս ոչ է երաժիշտ, երաժիշտ ոչ է սպիտակ, ուրեմն՝ Պետրոս ոչ է սպիտակ:

Անկարելիաւ իւրաքանչիւրոյն ստորասականաւ՝ Պետրոս է փայտ, փայտ է անմարմին, ուրեմն՝ Պետրոս է անմարմին:

Բացասականաւ՝ Պետրոս ոչ է բանական, բանական ոչ է կենդանի, ուրեմն՝ Պետրոս ոչ է կենդանի:

Իսկ հակասականն թողաւ, քանզի մինն է ընդհանուր և միւսն մասնաւոր: Արդ՝ ընդհանուրն ներհական տնօրինեա և զմասնաւորն ենթաներհական, յայնժամ ելոյր հակասական:

Արդ՝ այսոքիկ զորս բացատրեցաւ յաղագս արժարժման մտաց և բանալոյ դրանէ արհեստի հաւաքաբանութեան, այլ ոչ ըստ կանոնի և ըստ եղանակի: Զի հնգեկի հակասութիւնքս կամ ընդհանուր ստորասութիւն կամ ընդհանուր բացասութիւն, կամ մասնաւոր ստորասութիւն կամ մասնաւոր բացասութիւն ելոյր, և սոքօք քառիքս կազմի ամենայն եղանակք հաւաքաբանութեան, զի ընդհանուրքն ընդհանրաւ և մասնաւորքն մասնաւորաւ՝ ստորասութեամբ և բացասութեամբ, քանզի ներհակին երկեակքն ընդհանուրք, և հակասականին՝ միւս, իսկ անորոշին և իւրաքանչիւրոյն երկեակքն մասնաւոր: Վասն որոյ սահմանեալ³⁴ յօրինեցին ընդ հարկաւորին ստորասութեամբ և բացասութեամբ քառակի ուղղակի հաւաքաբանութիւն առանշոյ եղանակի, և յայնժամ յայնց քառից ծնանի երկրորդն եղանակ՝ քառեակ, և յերկակացն՝ երրորդն: Եւ սոքօք յեռակացս ամենայն ճշմարտութիւն և ստութիւն յայտնեալ մակերևի, և կարծիք տարակուսանաց տարաբարձեալ նահանջի³⁵: Եւ թէ կամիցիս, կարելիաւ ևս յօրինեա, և ևս՝ անկարելիաւ, զի ոչ ելոյր անտեղի: Եւ այս էր պատճառ հաւաքաբանութեանցն եղանակաց և մակացութիւն կա-

նոնաց նոցին, զի յայսց⁸⁸ գոյանան: Վասն որոյ դիւրագիւտ մակացութեամբս տնօրինեա նախադասութիւնս և եզերեա զնոյնն ի բանականութիւնս լսողին:

Որ ի միտս ապագրի, եթէ ի հաղորդութիւնս է արգիլումն, է անհատ, հիպէս՝ Պետրոս, զի անհատ և յատկացեալ յամենայնի⁸⁷, զի անհատ է ի յատկութեանց բաղկացեալն, սակս որոյ ք անհաղորդելի բազմաց: Եւ թէ ոչ՝ ընդհանուր, զի ունի հաղորդութիւն մասունքն ընդ միմեանս ըստ սահմանին, որպակ՝ մարդ, զի Պետրոս և Պօղոս և այլք են հաղորդ միմեանց ըստ սահմանին մարդկութեան, քանզի ոչ ոք ի սոցանէ տարրորշին, այլ հաղորդին բազմաւ:

Արդ՝ ընդհանուրքն ամենայն եռակի ելոյր. կամ է բոլոր սահման մասին, կամ է մասն սահմանին, կամ է այլակայք նմին: Արդ՝ որ բոլոր սահման ելոյր, է տեսակ, իսկ որ մասն՝ կամ է սեռ և կամ է տարբերութիւն: Իսկ այլակայք կամ է յատուկ, կամ է հասարակ պատահումն, քանզի մասանց ընդհանրին ամենեքեան սոքա ստորոգին, որզան՝ Պետրոս է մարդ, բանաւոր, կենդանի, զգայուն, սննդական, ծիծաղական և ճեմօղ, քանզի մարդըն, որ տեսակ ելով և մասանց սորին, այսոքիկ անընդհատք են, զի Պետրոս և Պօղոս ոչ երբեք տարբերին ի միմիանց սոքօք: Յաղագս որոյ այսոքիկ ըստ Պորփիրոսի մու ըստ տեսակիս կցորդութեամբ: Իսկ որ մասն ելոյր սահմանին՝ կամ է սեռ, կամ է տարբերութիւն: Եւ յայսց⁸⁸, որ ի տեսակաց յուլովից ստորոգի և ի զինչէումն, է սեռ, որպակ՝ կենդանի, զի մասն է սահմանի և ի յուլովից և ի զինչէումն ստորոգեալ: Եւ որ միոյր միայնոյր տեսակոյր⁸⁹ ստորոգի, և յորպիսի ինչէումն՝ է տարբերութիւն, հիզան՝ երկոտանի բանական, որ զմարդոյր տեսակոյր և եթ: Եւ թէ այլակայ, երկեակ. կամ ի յուլովից տեսակաց ստորոգի, կամ միոյր միայնոյր, որ ի մու՝ է յատուկ, որբար՝ ծիծաղական, որ միոյր միայնոյր տեսակոյր⁴⁰ ստորոգի: Իսկ որ ի յուլովից՝ են հասարակքն⁴¹ պատահք, որզան՝ դոյն: Ուրեմն ընդհանուրք քան զհընդեակս ոչ ելոյր յաւետ և նուազ, զի կամ տեսակ է, որ զբոլոր սահմանն ունի⁴², և կամ սեռ և տարբերութիւն, որք մասն են, կամ յատուկ և հասարակ, պատահումն են, որք այլակայք են, զի տեսակ է, որ զյուլովից և զտարբերիցելոց թուով ի ներում զինչէն ստորոգեալ: Սեռ է, որ զյուլովից զտարբերիցելոց⁴³ տեսակաց ի ներում զինչէն: Տարբերութիւն է, որ զյուլովից և զտարբերիցելոց թուով, կամ տեսակաւ ի ներում որպիսի ինչէումն ստորոգեալ: Յատուկ է, որ զյուլովից և զտարբերիցելոց թուով ի ներում որպիսի՝ ինչ: Եւ պատահումն է, որ զյուլովից և զտարբերիցելոց տեսակաց ի ներում որպիսի՝ ինչ:

Արդ՝ այսոքիկ են ընդհանուրք և ոչ յաւետ և նուազ: Եւ թէ ընդէր և հիմ սոցա ընդհանուր և տասնեկաց ստորոգութեացն սեռականագոյն սեռ ասի, չի յաւետ նոքա պարագրողք և սոքա ոչ նոյնագոյն, հիզան՝ պատահումն յորժամ ասի, իննեակն յայտնի և պարունակէ, և յորժամ դմի յիննուցն⁴⁴, զորս ընդ իւրեաւ, վասն որոյ ընդհանուրք նոքա քան զսոսա:

Եւ այսոքիւք⁴⁵ հնգեկիւք ընդհանրականիւք սահմանի զորինչ և սահմանի և թարց սոցայցր ոչինչ, քանզի զորինչ և յէակացս սահմանեսցի կամ ի հպուզոյն սեռէ և տարբերութենէ ելոյր, որզան՝ կենդանի բանական, կամ՝ ի հեռագոյն սեռէ և ի հպագոյն տարբերութենէ, որպակ՝ մարմին բանական կամ զգայական բանական, և կամ՝ ի սեռէ և յատկէ, հիպէս՝ կենդանի ծիծաղական, կամ՝ ի տարբերութենէ և յատկէ, որբար՝ բանական ծիծաղական, և կամ՝ ի սեռէ, տարբերութենէ, յատկէ և ի հասարակ պատահումն, որպակ՝ կենդանի բանական, ծիծաղական և երկոտնաշու և զայլն:

Արդ՝ յաղագս առաջնոյն առ իմաստասէրս ասի կարարեալ, իսկ այլքն ոչ նոյնպէս, թէպէտ և սահման:

Եւ արդ՝ որովհետև ծանուցեալ եղև համառօտաբար զտեսութիւնս⁴⁶ պարզառութեանց, յետ այսորիկ պարտ է զշարամանութեանցն բուն հարկանել, զի որպէս անդրանօր⁴⁷ երևելեօք զաներևոյթնս⁴⁸ և մասնաւորաւ զընդհանուրնս⁴⁹ բացատրեցաւ, նմանապէս և ի շարամանութիւնս ծանուցչան զծանուցանելին պարտ է բացերևոցել՝ նախադասութեամբ և եզրակացութեամբ, ուրեմն պարտ է զհաւաքաբանութիւնն և զնախադասութիւնն ըստ սահմանին ենթադատել:

Հաւաքաբանութիւն է բան, որոյ ի հաւանեալ⁵⁰ նախադասութեան միոյ, հարկաւորի վերաբերութիւն այլոյ միոյ նախադասութեան և յերկակացն եզրակացութիւն մու մակերէ: Իսկ նախադասութիւնն է բացերևութիւն իմն, որոյ եղանակաւ զսահման և զճշմարտութիւն իրաց բացատրեցցէ ստորասարար և բացասաբար և եզերեցուցէ իսկութեամբ: Բայց եռեակ ելոյր, զի թէ ենթակայն և ստորոգեալն միակերտ իցեն, ասի հաւաքաբանական նախադասութիւն, որզան՝ մարդ կենդանի է, և մարդ ոչ է կենդանի: Եւ թէ աւելի՝ ստորոգեալն ասի թէական, որզան՝ թէ⁵¹ բանական ծիծաղական է, կենդանի է, և թէ ո՛չ, ուրեմն՝ ո՛չ է կենդանի: Եւ թէ ոչ այսպէս և ոչ այնպէս, այլ տարորոշեալ՝ ասի տրոհական նախադասութիւն, որպակ՝ այս թիւ կամ կոճատ է և կամ՝ դար: Եւ բացասաբար՝ որ ոչ այսպէս ելոյր:

Եւ ամենայն հաւաքաբանութիւն եթէ սատակ մասնական իցէ, ոչ յամենայնում ճշմարտէ, որզան՝ մարդ, ձի և արջառ զներքինն շարժեն կլափ յուտելն, ուրեմն⁵² ամենայն կենդանի: Այլ ոչ ճշմարտի եզրն, զի կոկորդիլոսն դազան և փիւնիկն հաւ՝ զվերինն: Եւս՝ եթէ բացասականք իցեն երրեակքն, ոչ ելոյր ըստ եղանակի, այլ մու պարտ է ստորասական: Եւ է, զի ընդհանրաւ ընդհանուրն, և է, զի ընդհանրաւ⁵³ զմասնաւորն, որպէս և բացատրեցաւ, քանզի կանոն և եղանակ⁵⁴ նախադասութեանց քառակին էր և ոչ յաւէտ և նուազ, որպէս բացերևոցեցաւ:

Հակադարձութիւն է, զի ենթակայն ստորոգեալ և ստորոգեալն ենթակայ սնօրինեացի, և հակադարձալքն⁵⁵ ի նոյն քանակոչ և յորակոչ մնասցեն: Ուրեմն՝ ընդհանուր ստորասութիւնքն հակադարձին, որպակ՝ ամենայն մարդ ծիծաղական է, ամենայն ծիծաղական մարդ է:

Երկրորդ, մասնաւոր ընդ մասնաւորի, որպակ՝ ոմն մարդ կենդանի է, ոմն կենդանի մարդ է:

Երրորդ, ընդհանուրն մասնաւորին, հիպակ՝ ամենայն մարդ կենդանի է, ոմն կենդանի մարդ է: Արդ՝ հակադարձութեանցս ասի հարկաւոր:

Իսկ կարելի ընդհանրաւ զընդհանուրն, որբար՝ ամենայն կատու կլաւական, ամենայն կլաւական՝ կատու: Մասնաւոր առ մասնաւոր՝ ոմն կատու կլաւական է, ոմն կլաւական՝ կատու: Ընդհանուր առ մասնաւոր, ամենայն կատու շարժուն է, ոմն շարժուն՝ կատու:

Անկարելի⁵⁶ ստորասական, ամենայն մարդ սպիտակ է, և ամենայն սպիտակ՝ մարդ:

Բացասական, ոչ ոք մարդ սպիտակ է, ոչ ոք սպիտակ՝ մարդ⁵⁷:

Իսկ նախադասութիւն թէականին յայնժամ ելոյր հարկաւոր, յորժամ բազհիւսեալն⁵⁸ և կամ բացասութիւն նորին յարառեցեալ իցէ, որպէս նախնումն բացատրեցաւ: Ստորասաբար, հիպէս՝ եթէ այս իր ինքնակամ շարժի, կենդանի է: Եւ կամ կարևորաբար, որբար՝ մարդն ծիծաղական է բանական, իսկ կապիկն անբան և սոքա այլևայլ, ուրեմն՝ մարդն և կապիկն այլևայլ:

Իսկ տրոհականին նախադասութիւնն⁵⁹ յայնժամ ելոյր ստուգագոյն, յորժամ ստորասութիւն⁶⁰ նորա և կամ բացասութիւն զմու առեալ գործեցեն, հիբար՝ այս իր կամ բանական է, կամ անբան, զի թէ⁶¹ ոչ առդիցի⁶² իւրաքանչիւր սոցա ստորասութիւն կամ բացասութիւն, ոչ ըմբոնի զիսկն:

Եւ ամենայն հաւաքաբանական նախադասութեան միջնորդ է ըստ քա-

ուակի: Առաջնոյ եղանակին է, զի ի փոքերն ստորոգեսցի և ի մեծոջն⁶⁸ ենթակայասցի: Երկրորդում ներկեակսն⁶⁹ ստորոգեսցի: Երրորդումն ներկոսեանն ենթակայասցի: Իսկ քառորդն հակադրութիւն⁶⁵ նախկնոյն, սակայն ոչ ըստ ընութեան⁶⁶ եղանակացն: Քանզի անծանօթութիւն⁶⁷, որ յիմանալիսն և⁶⁸ թաքնագոյնսն, սորօք ածի ի լոյս և հաւաստեցուցանի⁶⁹: Վասն որոյ միջնորդն, որ ունի պատկանաւորութիւն⁷⁰ և ծանօթութիւն ընդ նախադասութեան և եզրակացութեան, դնի ի մէջ երկակացն և նովաւ ճշգրտաբար և հաւաստաբար զկարծիս⁷¹ տարանահանչէ: Եւ քառիւքս եղանակօք զորինչ և կամիս հաւաստեցո և նախադասութեամբ եզերեալ:

Կանոն է առաջնոյ եղանակին, զի փոքր նախադասութիւն, ստորասական և մեծն ընդհանրական լինիցի, և այս քառակի: Առաջինն ընդհանուր ստորասութիւն, նմանապէս՝ և եզրակացութիւն, որբար՝ ամենայն մարդ կենդանի է, ամենայն կենդանի գոյացութիւն է, ուրեմն՝ ամենայն մարդ գոյացութիւն է: Երկրորդ, փոքրն մասնաւոր ստորասութիւն և մեծն ընդհանուր ստորասութիւն, և եզրակացութիւնն մասնաւոր ստորասութիւն, հիզան՝ ոմն մարդ բանական է, ամենայն բանական կենդանի է, ուրեմն՝ ոմն մարդ կենդանի է: Երրորդ, փոքրն ընդհանուր ստորասութիւն և մեծն ընդհանուր բացասութիւն, և եզրակացութիւնն ևս ընդհանուր բացասութիւն, որզոն՝ ամենայն մարդ բանական է⁷², ոչ ոք բանական անասուն է, ուրեմն՝ ոչ ոք մարդ անասուն է: Չորրորդ, փոքրն մասնաւոր ստորասութիւն, և մեծն ընդհանուր բացասութիւն, և եզրակացութիւնն մասնաւոր բացասութիւն, հիբար՝ ոմն մարդ բանական է, ոչ ոք բանական անասուն է, ուրեմն՝ ոմն մարդ ոչ է անասուն: Բայց զգոյշ լեր, զի մի սխալեսցիս, զի ոմանք զմեծ նախադասութիւնն եդին սկիզբն⁷³ նախադասութեանց, այլ ես՝ զփոքրն, զի սանդուխտն ներքնոյն ելանեն ի վեր: Եւ ոչ են ներհակք, այլ զնոյնս ցուցանեն, թէպէտ հուսկ և յառաջ:

Կանոն է երկրորդին, զի նախկինքն ներհակաբար առնանիցին՝ ստորասաբար և բացասաբար, իբրու⁷⁴ զի մինն ստորասական և այլքն բացասական, և մեծն ընդհանրական: Եւ այս ևս քառակի. փոքր նախադասութիւնն⁷⁵ ընդհանուր ստորասութիւն, և մեծն ընդհանուր բացասութիւն, և եզրակացութիւնն⁷⁶ ևս ընդհանուր բացասութիւն, հիզան՝ ամենայն ծիծաղական բանական է, ոչ ոք փայտ բանական է, ուրեմն՝ ոչ ոք ծիծաղական փայտ է: Երկրորդ հակամին. ոչ ոք ծիծաղական փայտ է, ամենայն ծառ փայտ է, ուրեմն՝ ոչ ոք ծիծաղական ծառ է: Երրորդ, փոքր նախադասութիւնն⁷⁷ մասնաւոր ստորասութիւն և մեծն ընդհանուր բացասութիւն, և եզրակացութիւնն⁷⁸ մասնաւոր բացասութիւն, որզան՝ ոմն մարդ բանական է, ոչ ոք ծառ բանական է, ուրեմն՝ ոմն մարդ ոչ է ծառ: Չորրորդ, փոքրն մասնաւոր բացասութիւն⁷⁹ և մեծն ընդհանուր ստորասութիւն, և եզրակացութիւնն⁸⁰ մասնաւոր բացասութիւն, հիբար՝ ոմն մարդ ոչ է փայտ, ամենայն ծառ է փայտ, ուրեմն՝ ոմն մարդ ոչ է ծառ:

Կանոն է երրորդին, զի փոքրն ստորասութիւն, և մու ի նախադասութեանց ընդհանուր: Եւ այս վեցեկի. երրակացն եզրակացութիւնն⁸¹ մասնաւոր ստորասութիւն⁸² և երրակացն մասնաւոր բացասութիւն⁸³:

Առաջինն ընդհանուր ստորասութիւն և եզրակացութիւնն մասնաւոր ստորասութիւն⁸⁴, հիպակ՝ ամենայն ծիծաղական բանական է, ամենայն ծիծաղական կենդանի է, ուրեմն՝ ոմն բանական կենդանի է: Փոքր նախադասութիւնն մասնաւոր ստորասութիւնն և մեծն ընդհանուր ստորասութիւն⁸⁵, և եզրակացութիւնն⁸⁶ մասնաւոր ստորասութիւն, հիպակ՝ ոմն մարդ բանական է, ամենայն մարդ է է, ուրեմն՝ ոմն բանական է է: Փոքր նախադասութիւնն ընդհանուր ստորասութիւն⁸⁷ և մեծն մասնաւոր ստորասութիւն⁸⁸, եզրակացութիւնն

ևո⁸⁰ մասնաւոր ստորասութիւն, հիզան՝ ամենայն մարդ բանական է, ամենայն մարդ կենդանի է, ուրեմն՝ ոմն բանական կենդանի է:

Իսկ երրակացն, որոց եզրակացութիւնն⁸⁰ մասնաւոր բացասութիւն⁸¹, փոքրը նախադասութիւնն ընդհանուր ստորասութիւն⁸² և մեծն ընդհանուր բացասութիւն և եզրակացութիւնն՝ մասնաւոր բացասութիւն, որբար՝ ամենայն մարդ բանական է, ոչ ոք մարդ անասուն է, ուրեմն՝ ոմն բանական ոչ է անասուն: Փոքր նախադասութիւնն մասնաւոր ստորասութիւն⁸³ և մեծն ընդհանուր բացասութիւն⁸⁴, և եզրակացութիւնն մասնաւոր բացասութիւն, որբար՝ ոմն մարդ բանական է, ոչ ոք մարդ անասուն է, ուրեմն՝ ոմն բանական ոչ է անասուն: Փոքր նախադասութիւնն ընդհանուր ստորասութիւն⁸⁵ և մեծն մասնաւոր բացասութիւն⁸⁶, և եզրակացութիւնն⁸⁷ մասնաւոր բացասութիւն⁸⁸, հիպէս՝ ամենայն մարդ բանական է, ոմն մարդ ոչ է անասուն, ուրեմն ոմն բանական ոչ է անասուն:

Իսկ շորորդն, որ հակ⁸⁹ էր նախկնոյն, ի բաց թողաւ, քանզի անընտելացոյն է, յաղագս այնորիկ ոչ բացատրեցաւ:

Արդ՝ յետ այսց զնախադասութիւնս թէականին և տրոհականին պարտ է իմաստասիրել:

Թէական է, որոյ միջնորդն հարկաւորապէս համազուգեալ իցէ ընդ նախկնազունին¹⁰⁰, հիզան՝ այս մարմին եթէ ինքնակամ շարժի, կենդանի¹⁰¹ է, և զի ինքնակամ շարժի, ուրեմն՝ կենդանի է: Եւ¹⁰² կամ բացասաբար, որզան՝ ոչ ինքնակամ շարժի, ուրեմն՝ ոչ է կենդանի:

Իսկ տրոհականին յայնժամ ելոյր ստորասարար, յորժամ զմու ի նոցանէ ստորացուցես¹⁰³, հիբար՝ այս գոյացութիւն կամ մարմին է կամ անմարմին, այլ զի մարմին է, ուրեմն՝ ոչ է անմարմին, և զի անմարմին է, ուրեմն՝ ոչ է մարմին: Ոչ է անմարմին, ուրեմն՝ է մարմին, ոչ է մարմին, ուրեմն՝ է¹⁰⁴ անմարմին:

ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ՝

Ղնորհողին

Մակ ցութիւն մակացուացն
փառք և պատիւ յաւիտեանս
յաւիտենից: Ամէն¹⁰⁵:

Տարածայն¹⁰⁶, տառալժորդ, նրբաբան
և բանակոխ առարկութիւն:

Գեղ կ մակար անծախ հորդէ,
կեղ կռմակոր ձանձախ յորդէ:
Յեղ զայս համր գիրդ ի հարկս հոլով,
հեղ զայն յամր գիրք ի յ բկս յոլով:
Ամաց հերձի՝ ամաց պատուէր,
զի էր պատուէր, զի նա պատուէր:

ԵԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Տպագրում վերնագրված է՝ «Ծաղագս տրամաբանութեամ»: Մեզք նախընտրել ենք «Համատօտ տրամաբանութիւն» վերնագիրը, որովհետև նւ. իս՝ ամենայն հավանականությամբ ունից այդպես է անվանել Ջուղայեցին իր աշխատությունը, քանզի ձեռագրում կարդում ենք. «Է. թուին հայոց մեծաց ՌՄԽա Յովհաննէս վարդապետի իսպահանցոյ, համատօտ տրամաբանութիւն ի փառս Քրիստոսի: Ազնեա սուրբ հոգի աստուած» (Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. № 8888, էջ 367բ): Որ իվկապես դա հեղինակի ընտրած վերնագիրն է,

սարգորոշ երևում է հիշատակարանից, որը ցավոք, չկա տպագրում: Ահա այն. «Յուար-տեցա յամաստ տրամաբանութիւնս ի պարսկաստան յսպահան ի գեողաքաղաքն Ջուղայ ի դունս սրբոյ վանիս ամենափրկչի ի թուին ՌՄՍա Յամեսանն սեպտեմբրի ԺԸ յաշ-կերտէ սրբազանի հօրն և երջանիկ տեանն Դաթի, Յոհաննո քանի սպասաւորէ և յոգ-նամեղ անարժանէ ի փառս ամենասուրբ երրորդութեան: Եթէ հաճեսցիք միով հայր մե-ղայիս յիշեսցիք և թէ ոչ անմեղադիր լինիցիք յիմարութեանս վասն Քրիստոսի յուսոյն մե-րոյ: Ամէն» (նույն տեղը, էջ 392բ, ընդգծումն իմն է— Ն. Մ.): Ինչպես տեսնում ենք, հե-ղինակի հիշատակարանում այն անվանվում է «Յամաստ տրամաբանութիւնս», որի ս դի-մորոշ հողը ցույց է տալիս, որ հենց հեղինակն ինքն է այդպես վերնագրել իր աշխատու-թյունը:

Երկրորդ, ճիշտը ձեռագրի վերնագիրն է և ոչ թե տպագրիցը, որովհետև Ջուղայեցու աշխատության մեջ քննարկվում են ոչ թե տրամաբանությանը վերաբերող առանձին հար-ցեր, որի դեպքում, իսկապես, տեղին կլիներ «Յաղագս տրամաբանութեան» վերնագիրը, այլ ձևական տրամաբանության իր ժամանակի բոլոր հարցերը: Տպագրիչն այդպես է ան-վանել, ըստ երևույթին, նկատի ունենալով աշխատության ծավալը և ոչ թե բուն բովան-դակությունը: Երրորդ, Ջուղայեցու Համաստ տրամաբանութեան հետ միասին «Յաղագս քերականութեան» վերնագրով լույս է տեսել նաև նրա քերականական՝ նույնպես խիստ համառոտ, բայց բովանդակությամբ հարուստ աշխատությունը, որը Մաշտոցի անվ. մա-տենադարանի առայժմ հայտնի երկու ձեռագրում էլ կոչվում է Քերականութիւն (տե՛ս ձեռ. ձեռ. № 2552, էջ 329ա, № 3368, էջ 349ա):

2 Տպագրում՝ եռակօք:

3 Ձեռագրում՝ եռակի:

4 Ձեռագրում չիք՝ որ:

5 Տպագրում՝ ելոյ:

6 Ձեռագրում՝ է երկեակ:

7 Տպագրում չիք՝ և:

8 Ձեռագրում՝ «իմացումն նաւասար ասի տրամաբան»: Ձեռագրում թույլ է տրված ակնհայտ սխալ, որը վկայում է, որ գրիչն իսկապես անհմուտ է եղել տրամաբանության մարզում:

9 Ձեռագրում՝ կենդանի է:

10 Ձեռագրում՝ գոյացութիւն է:

11 Ձեռագրում՝ կենդանի է:

12 Ձեռագրում՝ կենդանի է:

13 Տպագրում՝ քառեակք:

14 Ձեռագրում՝ արգիւն:

15 Տպագրում չիք՝ «զի տարաբարձումն մու անհատի»:

16 Միշտ է, թե ձեռագրում և թե տպագրում գրված է «եռեակ», բայց պետք է լինի «երեակ»: Այդ է հուշում ինչպես դրան հաջորդող թվարկումը՝ «կամ ըստ ինքեան է կամ՝ բչ», այնպես էլ նախադասության շարունակությունը՝ «և այս ևս երկակի՝ կամ եռեակ սմանակս յայտնէ, կամ՝ ոչ»:

17 Ձեռագրում՝ գերկեակս:

18 Տպագրում՝ առաքինութիւն:

19 Տպագրում՝ դասանունաբար:

20 Տպագրում՝ յարանունաբար:

21 Տպագրում չիք՝ ոմն:

22 Ձեռագրում՝ գլոյովոց:

23 Ձեռագրում՝ Բեսեիլէի:

24 Թե ձեռագրում և թե տպագրում գրված է «դժոխաշարժ», բայց դարձիկ ենք «դժուա-րաշարժ» որպես դյուրաշարժի հակադրություն: Ինչպես տեսնում ենք, տպագրում նույնպես թույլ է տրված ակնհայտ սխալ, որը՝ հաստատում է մեր՝ այն միտքը, որ հավանաբար տպագրիչի տրամադրության տակ եղած ձեռագիրը նույնպես զերծ չի եղել էական թերու-թյուններից:

25 Ձեռագրում՝ որոյն.

26 Ձեռագրում՝ ընկալեալ:

27ա Ձեռագրում՝ ցրտացեալ չիք՝ «հիպես գերութիւն: Եւ է, որ պարզաբար, որբար՝ գիցել: Եւ է սորա գլխաւ յոմն գնուագն, զի ցրտացուցանել»:

27բ Ձեռագրում՝ ցրտացեցուցանելոյն:

28 Թե ձեռագրում և թե տպագրում «եղջերաքաղ» է, բայց պետք է լինի՝ եղջերուաքաղ:

29 Ձեռագրում չիք՝ կամ:

30 Թե ձեռագրում և թե տպագրում եղջերուաքաղ է:

- 31 Տպագրում՝ Յամենսկը:
- 32 Ձեռագրում չիք՝ «ամենայն սեաւ է»:
- 33 Ձեռագրում չիք՝ «Ուրեմն՝ Պետրոս է երզնցիկ»:
- 34 Ձեռագրում չիք՝ սահմանեալ:
- 35 Տպագրում՝ ճհանջի:
- 36 Ձեռագրում՝ յայտոց:
- 37 Ձեռագրում՝ լամենայնի:
- 38 Ձեռագրում՝ յայտոց:
- 39 Ձեռագրում՝ միայնոյր և տեսակոյր:
- 40 Ձեռագրում՝ միայնոյր և տեսակոյր:
- 41 Տպագրում՝ հասարակն:
- 42 Ձեռագրում՝ ունին:
- 43 Տպագրում՝ տարբերեցելոց:
- 44 Ձեռագրում՝ յինուցն, տպագրում՝ յինունցն: Ճիշտ է՝ յինունցն:
- 45 Տպագրում՝ այսոքիկ:
- 46 Տպագրում՝ տեսութիւն:
- 47 Ձեռագրում՝ անտաճօր:
- 48 Տպագրում՝ աներևոյթն:
- 49 Տպագրում՝ ընդհանուրն:
- 50 Տպագրում՝ հաւանել:
- 51 Ձեռագրում չիք՝ թէ:
- 52 Ձեռագրում չիք՝ ուրեմն:
- 53 Ձեռագրում չիք՝ «ընդհանուրն, և է զի ընդհանրաւ»:
- 54 Տպագրում՝ եղանակն:
- 55 Ձեռագրում՝ հակադարձել:
- 56 Ձեռագրում՝ անկարելին:
- 57 Ձեռագրում՝ մարդն է:
- 58 Ձեռագրում՝ քաղհիսելն:
- 59 Ձեռագրում՝ նախադասութիւն:
- 60 Ձեռագրում՝ ստորադասութիւն:
- 61 Ձեռագրում չիք՝ թէ:
- 62 Ձեռագրում՝ առդից:
- 63 Ձեռագրում՝ մեծուջն:
- 64 Ձեռագրում չիք՝ «ներկեակն ստորգեցի: Երրորդունն»:
- 65 Ձեռագրում՝ հակադրութիւնն:
- 66 Ձեռագրում՝ բնութեանն:
- 67 Ձեռագրում՝ անծանօթութիւնն:
- 68 Տպագրում՝ ի:
- 69 Ձեռագրում՝ հաւատեցուցանէ:
- 70 Ձեռագրում՝ պատկանաւորութիւնն:
- 71 Տպագրում՝ զկարծիս:
- 72 Ձեռագրում չիք՝ է:
- 73 Ձեռագրում՝ զկիսն:
- 74 Ձեռագրում չիք՝ «և բացաւքար, իբրու»:
- 75 Ձեռագրում՝ նախադասութիւն:
- 76 Ձեռագրում՝ եզրակացութիւն:
- 77 Ձեռագրում՝ նախադասութիւն:
- 78 Ձեռագրում՝ եզրակացութիւն:
- 79 Ձեռագրում՝ բացասութիւնն:
- 80 Ձեռագրում՝ եզրակացութիւն:
- 81 Տպագրում՝ եզրակացութիւն:
- 82 Ձեռագրում՝ ստորասութիւն:
- 83 Ձեռագրում՝ բացասութիւնն:
- 84 Ձեռագրում՝ ստորասութիւնն:
- 85 Ձեռագրում՝ ստորասութիւնն:
- 86 Ձեռագրում՝ եզրակացութիւնն:
- 87 Ձեռագրում՝ ստորասութիւնն:
- 88 Ձեռագրում՝ ստորասութիւնն:
- 89 Ձեռագրում՝ ևրս:
- 90 Ձեռագրում՝ եզրակացութիւն:

- 91 Ձեռագրում՝ բացասութիւնն:
 92 Ձեռագրում՝ ստորասութիւնն:
 93 Ձեռագրում՝ ստորասութիւնն:
 94 Ձեռագրում՝ բացասութիւնն:
 95 Ձեռագրում՝ ստորասութիւնն:
 96 Ձեռագրում՝ բացասութիւնն:
 97 Ձեռագրում՝ եզրակացութիւն:
 98 Ձեռագրում՝ բացասութիւնն:
 99 Ձեռագրում՝ հարկ:
 100 Ձեռագրում՝ նախնագումնի:
 101 Ձեռագրում չիք՝ «Կենդանի է, և զի ինքնակամ շարժի»:
 102 Ձեռագրում չիք՝ «Եւ կամ բացասաբար, որպան՝ ոչ ինքնակամ շարժի, որքան
 ոչ է կենդանի»:
 103 Ձեռագրում՝ ստորասուցես:
 104 Ձեռագրում չիք՝ է:
 105 «Ամէն» բառից հետո ձեռագիրն ունի հեղինակի հիշատակարանը, որ տե՛ս սույն
 ծանոթագրություններից № 1-ում:
 106 Այս չափածո բառախաղը չկա ձեռագրում, ուստի պետք է ենթադրել, որ այն
 հորինել է տպագրիչը՝ Ղուկաս Վանանդեցին, որի տպագրած մյուս գրքերում ևս այդպիսի
 նյութեր շատ կան:

Г. К. МИРЗОЯН—Сочинение Ованеса Джугаеци «Краткая логика».—
 18-го сентября 1992 года исполнилось 300 лет со дня завершения тру-
 да «Краткая логика» Ованеса (Мркуза) Джугаеци—выдающегося дея-
 теля армянской культуры 17—18 вв., «всесветного философа», логика,
 грамматика, живописца и «богослова королей». Пользуясь этим по-
 водом, мы решили переиздать это произведение, учитывая ряд обстоя-
 тельств. Во-первых, среди дошедшего до нас богатого наследства Джу-
 гаеци этот труд представляет особую важность, поскольку несмотря на
 небольшой объем, является неоспоримым достижением армянской ло-
 гической мысли. Развивая тысячелетние традиции науки логики в Ар-
 мении, Ованес Джугаеци фактически первый среди армянских логи-
 ков широко использует достижения персо-арабских ученых в этой об-
 ласти. Более того, оставаясь верным средневековым принципам логи-
 ки, он проявляет устремления, созвучные духу науки своего времени,
 пытается по-новому решить многие вопросы традиционной логики. На-
 пример, противопоставляясь господствующему представлению о том, что
 в дедуктивном умозаключении на первое место следует ставить боль-
 шую посылку, Джугаеци, наоборот, ставит малую посылку. Причем он
 делает это вполне осознанно и, объясняя это читателю, пишет: «Будь
 осторожен, чтобы не ошибиться, ибо некоторые (логики) на первое ме-
 сто ставят большую посылку, но я на первое место ставлю меньшую
 посылку, так, как по лестнице от низшей ступени поднимаются к выс-
 шим, но эти (способы построения силлогизмов) не противоречат друг
 другу, ибо суть их одно и то же». Во-вторых, хотя этот труд Джу-
 гаеци дошел до нас в рукописном и печатном вариантах, но пока из-
 вестный единственный рукописный экземпляр не является автографом
 и, будучи переписанным несведущим в логике писцом, полон очевид-
 ных ошибок и пропусков, а печатный вариант, хотя в сравнительно луч-
 шем состоянии, тоже не лишен такого рода недостатков, кроме того,
 сегодня это произведение является библиографической реликвией, не-
 доступной как для изучающих историю армянской философии студен-
 тов и специалистов, так и арменоведов.

При подготовке текста к публикации в целом взят за основу пе-
 чатный вариант труда Джугаеци, а для уточнений использована ру-
 копись,